ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/22» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

24-ը հունվարի 2020թ.
Ժամը 12[30]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/22» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը քննարկելու վերաբերյալ.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը քննարկելու վերաբերյալ.

(Ա. Մաղաքյան)

1.1 Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/22» ծածկագրով ընթացակարգի շրջանակում 49-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին, ծանուցվել էր ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթեր, սակայն «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել էր 66-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում (Հավելված 3) և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 3.1), որը թյուրիմացաբար գնահատող հանձնաժողովի կողմից չէր նկատվել: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշեց վերացնել իր կողմից կայացրած որոշումը այն մասով, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և որոշեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մասնակցից պահանջել շտկել արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացնել 49-րդ չափաբաժնի մասով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթեր:

1.2 «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից նույն օրը ներկայացվեց 49-րդ չափաբաժնի մասով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (Հավելված 3) և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1), որը ներկայացվեց գնահատող հանձնաժողովի քննարկմանը:

1.3 24.01.2020թ. ժամը 16:30-ին կայացրած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 49-րդ չափաբաժնի մասով ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը և տեխնիկական բնութագիրը գնահատել գնանշման հրավերի պահանջներին համապատասխան և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները վերջինիս 49-րդ չափաբաժնի մասով հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց 49-րդ չափաբաժնի մասով հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/22» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/22» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Նազարյան
Գնահատող		Վ. Վահանյան
Գնահատող		Հ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար		Ա. Մաղաքյան